ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2021թ. № 438

ՌՈԲԵՐՏ ԱՍՄԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 358 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 8-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-08112021-06-0082 որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ռոբերտ Ասմարյանին սեփականության իրավունքով պատկանող, Քըրք Քըրքորյան փողոցի վրա գտնվող, 06-006-0309-0003 կադաստրային ծածկագրով 0,16 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի հոկտեմբեր 7-ի «Ռոբերտ Հովհաննեսի Ասմարյանին սեփականության իրավունքով պատկանող, Քըրք Քըրքորյան փողոցի վրա գտնվող, հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 358 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1) որոշման նախաբանում «պարիսպների» բառից հետո լրացնել «թվով ութ դռների, պատուհանների, միջնորմների» բառերով.
2) որոշման 1-ին կետում գրված «19» թիվը փոփոխել «23,4» թվով.

3) որոշման 1-ին կետը «պարիսպները» բառից հետո լրացնել «թվով ութ դռները, պատուհանները, միջնորմները» բառերը.

4) որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետում «940 627» թիվը փոփոխել «1 028 457» թվով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«30» դեկտեմբերի 2021թ. № 439

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանի զեկուցագիրը, Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի ծնողներին շնորհակալագրեր և կոնֆետներ հանձնելու նպատակով ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 203 800 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավար՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունվարի 2022թ. № 1

ԳՈՌ ՆՈՐԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նորիկ Զաքարյանի մահից հետո 06-006-0480-0019 կադաստրային ծածկագրով 0,179 հա մակերեսով հողամասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի վկայագրով փոխանցվել է Գոռ Նորիկի Զաքարյանին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006A2BM3IX), Գոռ Նորիկի Զաքարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գոռ Նորիկի Զաքարյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող 06-006-0480-0019 կադաստրային ծածկագրով 0,179 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Այգեստան փողոց, թիվ 297» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. հունվարի 3
ք.Սպիտակ